Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2024թ.-ի ապրիլի 22-ից 26-ը Սլովենիայի Հանրապետություն (ք. Լյուբլյանա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

1) Աշխեն Պապոյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության վարչության (այսուհետ՝ ՀՏՌՎՎ) հարկային տեղեկատվության բաժնի պետ
2) Աննա Բեգլարյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության վարչության փոքր հարկ վճարողների վերլուծության և մոնիտորինգի բաժնի պետի տեղակալ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Սլովենիայի Հանրապետություն, ք. Լյուբլյանա, 2024թ. ապրիլի 22-ից 26-ը

3. Հրավիրող կողմը՝

Ֆինանսական առաջավոր փորձի կենտրոն (CEF:Center of Excellence in Finance)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Մարդկային ռեսուրսների կառավարում. որոշումների կայացման գործընթացը ռիսկերի կառավարման մեջ» եռօրյա դասընթացին: Դասընթացը միտված էր ներկայացնել մասնակիցներին մարդկային ռեսուրսների կառավարման տարբեր ասպեկտներ միահյուսված համապատասխանության ռիսկերի կառավարման հետ:

Դասընթացին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության, Սլովենիայի Հանրապետության, Բուլղարիայի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության, Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետության, Բոսնիա և Հերցեգովինայի Դաշնության, Մոնտենեգրոյի Հանրապետության և Վրաստանի

ավելի քան 25 ներկայացուցիչ, ովքեր իրենց երկրներում զբաղեցնում են բարձր և միջին մակարդակի ղեկավար պաշտոններ, ինչպես նաև անձնակազմի կառավարման ստորաբաժանումների ղեկավար պաշտոններ:

Նպատակադրված արդյունքների իրականացման հիմնական միջոց էր ընտրվել օրինակելի երկրների փորձի ներկայացումը, փոխադարձ քննարկումները: Հանդիպումն աչքի էր ընկնում՝ ակտիվ քննարկումներով, գործնական մոդուլների, թիմային առաջադրանքների իրականացմամբ: Հանդիպման աշխատանքային լեզուն անգլերենն էր:

5. Քննարկված թեմաները՝

Դասընթացի ժամանակ քննարկվող թեմայի խորագիրը՝ համապատասխանության ռիսկերի կառավարման ժամանակակից մեթոդաբանություն էր, որոշումների կայացման գործընթացի բարդությունները և հեռանկարները, որի շրջանակներում մանրամասն ներկայացվել և քննարկվել են հետևյալ թեմաները՝

1. Նիդեռլանդների հարկային վարչարարության վերաբերյալ պատկերացումներ, համապատասխանության հետ կապված հիմնական ռիսկեր,
2. Արդյունավետ հաղորդակցման մոդելներ,
3. Փոփոխությունների կառավարման ռազմավարություններ,
4. Ադապտիվ առաջնորդության ոճեր,
5. Թիմերի ձևավորման և կառավարման պրակտիկաներ:

Ծրագրի ողջ ընթացքում մասնակիցները կենտրոնացած էին տեսական գիտելիքները գործնական դաշտ տեղափոխելու հմտությունների զարգացման, գործնական մոդուլների միջոցով քննարկումների իրականացման վրա:

ՊԵԿ ներկայացուցիչները մասնակցել են բոլոր քննարկումներին, ներկայացրել են ՊԵԿ պրակտիկայում անձնակազմի կառավարման շրջանակներում, որպես ղեկավար ունեցած հաջողությունները, առողջ աշխատանքային միջավայր ստեղծելուն ուղղված ջանքերը, ինչպես նաև թիմային աշխատանքում հանդիպած դժվարությունները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացի ընթացքում ելույթ են ունեցել Նիդերլանդների Թագավորության հարկային վարչարարության մասնագետը (Tax Administration, the Netherlands), ինչպես նաև՝ Հյուսիսային Մակեդոնիայի «Վիտա Ինստիտուտ» կազմակերպության հիմնադիր, ՄՌԿ փորձագետը (Vita Institut, North Macedonia):

Դասընթացը վարող մասնագետների ելույթները բազմաբնույթ էին և համեմված օրինակներով և գործնական առաջադրանքներով: Դասընթացի թեմաները ներկայացվել են երեք օրերի ընթացքում՝ յուրաքանչյուր օրվա ավարտին հարց ու պատասխանների միջոցով ամփոփվել է տվյալ նյութերի բովանդակությունը: Դասընթացի առաջին օրվա ելույթների ժամանակ ներկայացվել են հետևյալ թեմաները՝ Նիդեռլանդների հարկային վարչարարության վերաբերյալ պարկերացումները, համապատասխանության ռիսկերի հետ կապված խնդիրները: Թիմերի բաժանվելու միջոցով իրականացվել են մարդկային ռեսուրսների կառավարման հիմնական մարտահրավերների վերհանում՝ հիմնված անձնական փորձի վրա: Դասընթացի երկրորդ օրը ներկայացվեցին որոշումների կայացման գործընթացի հիմնական բարդությունները, հաղորդակցման արդյունավետ մոդելները: Նույն օրը մասնակիցներից յուրաքանչյուրը անհատական հարցարանի միջոցով բացահայտեց իր ուժեղ և թույլ կողմերը և դրանց վրա աշխատելու պրակտիկ մեթոդների մասին տեղեկություններ ստացավ:

Երրորդ օրը մասնակիցները ավելի խորացան գործնական գիտելիքների զարգացման, թիմերում առաջընթացը չափելու պրակտիկ մոդուլների (GRPI) ուսումնասիրության մեջ: Քննարկվեցին թիմերի ձևավորման CANVAS մեթոդաբանությունը, թիմերի զարգացման մակարդակները (TUCKMAN): Գործընկերների հետ զույգերով քննարկումների միջոցով վեր հանվեցին անձնակազմի կառավարման այն ուղղությունները, որոնք հնարավոր է կատարելագործել: Մասնակիցներից յուրաքանչյուրը հանդես եկավ սեփական փոքր ելույթով:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Տվյալ հանդիպման շրջանակը չէր նախատեսում պայմանավորվածությունների ձեռքբերում կամ փաստաթղթերի ստորագրում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Առաջիկայում նախատեսվում են մի շարք դասընթացներ և աշխատաժողովներ, որոնք ևս կազմակերպվելու են Ֆինանսական առաջավոր փորձի կենտրոնի կողմից: Վերոնշյալ դասընթացներին հնարավորություն կա մասնակցելու թե՛ առցանց ձևաչափով, թե՛ ֆիզիկական ներկայությամբ:

Այլ երկրների հետ փորձի փոխանակումը կնպաստի ՀՀ ՊԵԿ գործառույթների արդյունավետության բարձրացմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Աշխեն Պապոյան

Աննա Բեգլարյան

30.04.2024թ.